

վայր իջանելով, ուստի յայտնի երեւի Սեղովանայ գիւղն իւր պարսպայիս յարեալս» :

1172ին ուղեգիր Թէոտորիք եպս.ին վերեւի վկայութիւնն ալ իր արժէքը ունի. յիշեալը՝ իբր ստուգապատուած հեղինակ՝ նկարագրելէ յետոյ Պետրոսի վանքի եկեղեցին ու ապաշխարութեան այրը, կը մանրամասնէ այն խորհրդաւոր նկարը որ այդ Թուականին զետեղուած էր նոյն եկեղեցիին մէջ, ու ապա կը յարէ թէ նոյն եկեղեցին Հայոց սեփականութիւնն էր: Յիշել պէտք է նաև Վերդպուրկի Յովհ. եպս.ին վկայութիւնը. ան Հառաչանաց վանքը Յունաց ձեռքը կը կարծէ. քննիչները որքան Թէոտորիքը ստուգապատուած կը կարծեն, նոյնքան Վերդպուրկի Յովհաննէս եպիսկոպոսը՝ չփոթող մը: Ան շատ անգամ հայր յոյնին հետ, ինչպէս յոյնը հայուն և ասորիին հետ կը շփոթէ: 1165ին իր այցելութեան ժամանակ Դաւթի բերդին դիմաց գտնուած եկեղեցիները նկարագրելու առեն, Մար-Սարայի վանքի միաբանութեան Métochion յունական վանքը հայոց սեպհականութիւն կը կարծէ. և չի յիշեր անոր մօտի հայոց վերաբերեալ Եագուպիի եկեղեցին. հետևաբար վերեւի իր վկայութիւնն ալ չբոթութեան արդիւնք կրնայ նկատուիլ և Թէոտորիքի վկայութիւնը կը կարծուի իբր հեղինակութիւն, ըստ քննչաց:

Այժմ դնենք Հառաչանաց վանքին հայկական հիմնարկութիւն մը ըլլալու մասին երկու գիտնականներու գրուածքին թարգմանութիւնը, որ է հետևեալը.

«Պարսիկները 614ին Ս. Պետրոսի կրկնակ եկեղեցիները քանդեցին, ինչպէս կրնանք եզրակացնել այն երկու նուակատիքներէն զոր Ը. դարու սաղիմական ծիսարանին մէջ արձանագրուած են. «Ի Ս. Պետրոս նուակատիք». միւսը՝ 17 Օգոստ. այս բառերով. «Ս. Պետրոս առաքելոյն եկեղեցիին մէջ նուակատիք» : Այս սրբավայրերու առաջինը արդէն ծանօթ է մեզ Զ. դարու վկայութիւններով, ան քահանայապետին տան տեղոյն եկեղեցին է: Նոյն ծիսարանը այս կերպով կը յիշատակէ զայն Աւագ Ուրբաթի թափօրին առթիւ. «Ի Ս. Պետրոս օւր էր Կայիափայի տունը». մեզ կը մնայ փնտռել երկրորդին ծագումը: Եթէ մենք կը հաւատանք Անաստաս վրդ.ի ցուցակին, ան Ե. դարու հայկական արքունի հիմնարկութիւն մ'է Հառաչանի Պետրոսի անունով: Առանց քննութեան կրնա՞նք մերժել այս ցուցակին հեղինակու-